

տուութեան առջև: Եւ Աւետարանը ձեռքը բռնած, և անդադար կարդալով հոն Որդի Աստուծոյ և Որդի մարդոյ, և Ու իմ կամք՝ այլ քոյոյ լիցիւն, պիտի շարունակէր դարեր ու դարեր դատափետել գլխադեղոն, որ ի Քրիստոս երկու բնութիւն և երկու կամք ուսուցեր էր: Ու մեր զրիչները պիտի խանգարէին հին վաւերագրերը, մեր ազգին ձեռքն աւելի բազմաթիւ ու զօրաւոր փաստեր տալու համար ժողովին վարդապետութեան դէմ: Եւ ի դարուն մէջ անգամ դեռ պիտի գտնուէին գիտուններ՝ որ ամբաստանէին գլխադեղոն իրրեւ պատճառ

Հայոց բաժանման. որպէս թէ կարենար ժողով մը՝ զումարուելէն 140 տարի վերջ հերձուած գոյացնել. և կամ այնքան ժամանակ ուղղափառը յանկարծակի չարափառ դառնալ ու ստիպել զՀայս զատուելու կաթ. Եկեղեցիէն: Պիտի շարունակէին այդ ամբաստանութիւնը, որպէս զի հաստատէին՝ թէ ո՛րքան յամբ ենք մեր աւանդական սխալ համոզումները սրբազրելու մէջ: Եւ մեր ազգին այս մտայնութիւնը՝ սահմանուած է անկասկած հոգեբանական անսովոր երևոյթ մը մնալու քրիստոնէութեան պատմութեանը մէջ:

(Շարունակելի)

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

ՆԻԻԹԵՐ ՊՈՒԼԿԱՐԱՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅՔ Ի ՊՈՒԼԿԱՐԻԱ

ՍԿԻՋԲԷՆ ՄԻՆՁԵՒ 1700

Համառօտ «ակնարկ» մ'է գրութիւնս և կարելի է իբր կմախք գործածել ամբողջական ուսումնասիրութեան մը, որ իմ ունեցած պայմաններու տակ անկարելի էր:

Պուլկարք ծագամբ հին չեն: Հայք անոնց ծագումէն առաջ իսկ գտնուած են անոնց՝ պուլկարներուն ներկայ հայրենի հողամասին վրայ: Իմ նպատակս պիտի ըլլայ հարեւանցի ակնարկով ուրուագիծ մը տալ հնագոյն և սակայն քիչ ծանօթ այս գաղութիս անցեալ փառքին և պատմութեան:

Առաջին անգամ՝ այս շրջանին մէջ, հայոց կը հանդիպինք, Բիւզանդիոնի Լեոն Ա. կայսեր (457-474) օրերուն և պարսից ձեռքէն փախըստական երկու հայ շառաւիղներ են, որոնց սերունդը յետոյ Հերակլ կայսեր օրով (620ին) Փիլիպիայէն (հաւանաբար այժմու Ֆիլիպէն = Փիլիպպոլիս) Ադրիանուպոլիս (Էստրնէ) փոխադրուեցան. (Տ. Թումանի շայոց պատմութիւնը — Զեռագիր Ա. Աւստրալիանի):

Յուստինիանոսի օրերուն ալ մեծ թիւով հայեր Հայաստանէն գաղթուեցան Բիւզանդիոնի կայսրութեան հիւսիսային սահմաններուն վրայ և գործածուեցան Վուսդ և Աւար ցեղերուն դէմ իբր պատնէշ. Բիւզանդիոնի թագապիւրներուն համար սովորական էր տարբեր ցեղերու կըտրիճներ իրենց երկրէն խլելով օտար երկիրներու վրայ բանակեցնել: Այսպէս թէ հարկատու ժողովուրդները կը տկարանային և թէ իրարու հանդէպ վարձկան զինուորի ոստիկանական դերը

կը կատարէին: Պատմաբան Իրէշը կը յիշէ արաբ և հայ գունդի մը Ֆիլիպէի մէջ իբր սահմանապահ գոյութիւն ունենալը. (Տեղեկագիր Ֆիլիպէի Գրասիրաց Եղբայրութեան երեսնամեայ գործունէութեան, Պուլկարահայոց վրայ պատմական ակնարկով մը):

Յուստինիանոսի նման ըրաւ նաեւ Կոստանդին Ե. Կոբրոնիմոս կայսրը (741-745) և հայազգի Թէոդորա Ա. կայսրուհին (850-867) որ մասնաւորաբար 853ին սկսաւ հալածել «Հայ Պողոմի» կամ «Պոկոմի» կոչուած պաղիկեան աղանդաւորները, մասնաւոր մանիքեան կոչուածները, որոնք մեծ խումբերով բերաւ և Թրակիա հաստատեց: Գուցէ բողոքականութեան ռահվիրայ այս առաջին քրիստոնեայ հերձուածը զրեթէ ամբողջութեամբ կը բաղկանար հայերէ, որոնք տունով տեղով իրենց երկրէն տարագիր կ'ըլլային: Ասոնց մասին պուլկար ծանօթ պատմագիր Dr. E. Tachella կ'ըսէ. «Երկար ժամանակ հալածելէ վերջ (853-56) վերջապէս ստիպուեցաւ (թէոդորա) Պուլկարիա գաղթել տալ (պաղիկեանները) որոնք մնացին մինչև որ ժիշդարուն կաթոլիկ եղան»: Եւ արդարեւ անոնք ուրոյն համայնք մը կը կազմեն դեռ մինչև հիմա ալ, մեծամասնութեամբ կաթոլիկ (եթէ ոչ ամբողջութեամբ) և Ֆիլիպէի մէջ ծանօթ են իբր «բալկերեան»՝ իրենց թագով, սովորութիւններով ևն.: Խորիստ և Կտրիճ կրօնաւոր այս համայնքը զարմանալի կերպով հայկական յատկանիշեր ունի. Dr. E. Tachella